

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/6**

**16 փետրվարի 2016 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Արամ Անթանյանի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.12.2015 թ-ի թիվ 472/04 որոշման դեմ:

#### **Ա/Ձ Արամ Անթանյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Արամ Անթանյանը հայտնում է, որ պետական գրանցում ստանալուց և հարկային մարմնում հաշվառման կանգնելուց հետո մինչ օրս գործունեություն չի իրականացրել, ինչպես նաև իրազեկված չլինելու հետևանքով չի լուծարվել: Տեղեկացնում է նաև, որ պարտավորությունների առկայության վերաբերյալ երբևէ չի տեղեկացվել (ծանուցվել):

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Արամ Անթանյանը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.12.2015 թ-ի թիվ 472/04 որոշումը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Արամ Անթանյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 29.12.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված պարտավորությունը կազմում է 371.390 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է 2009-2012 թ.թ. ընթացքում «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նվազագույն սոցիալական վճարի գումարները սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 29.12.2015 թ-ին ընդունվել է թիվ 472/04 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Արամ Անթանյանից 371.390 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Արամ Անթանյանը հարկային մարմնում հաշվառման կանգնելուց հետո երբևէ գործունեություն չի իրականացրել: Նշվեց նաև, որ 01.05.2006 թ-ի դրությամբ Ա/Ձ Արամ Անթանյանը պարտավորություններ է ունեցել միայն նվազագույն սոցիալական վճարի գծով, հետևապես նրա գործունեությունը պետք է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցված (լուծարված) լիներ, հետևյալ պատճառաբանությամբ.

11.11.2005 թ-ին ընդունված «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր, սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն. «Սույն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներում չնշված անհատ ձեռնարկատերերն ազատվում են 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև

դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից (բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված դեպքի):

Սույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի կողմից 2006 թվականի հունվարի 1-ից հետո մինչև պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառման պահը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարներ չեն հաշվարկվում (չեն վճարվում):

Սույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի ցանկերը (2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների պարտադիր նշումով) հարկային տեսչությունները մինչև 2006 թվականի սեպտեմբերի 1-ը ներկայացնում են պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ՝ մինչև 2006 թվականի նոյեմբերի 1-ը պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, նրանց վկայականները անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար»:

Տվյալ դեպքում Ա/Ձ Արամ Անթանյանը բավարարել է վերոգրյալ իրավանորմով նախատեսված դրույթների պահանջներին, հետևապես նրա վերաբերյալ տվյալները պետք է ընդգրկվեին հարկային տեսչության կողմից մինչև 2006 թվականի սեպտեմբերի 1-ը պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ ներկայացվող ցանկերում՝ մինչև 2006 թվականի նոյեմբերի 1-ը պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, ինչպես նաև վկայականը անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար: Սակայն, տվյալ դեպքում հարկային տեսչության կողմից «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր, սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված պահանջները չեն կատարվել, ինչի հետևանքով Ա/Ձ Արամ Անթանյանի նկատմամբ 2009-2012թ.թ. համար պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների գծով, ըստ էության, հաշվարկվել են ոչ իրավաչափ պարտավորություններ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.12.2015 թ-ի թիվ 472/04 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝

